ԿԸՀ 2025 թ. Հայաստանի և այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2025թ. արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել է մեկ միավորով՝ իջնելով **46** միավոր՝ 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա:

Հայաստանի ԿԸՀ 2025թ. համաթիվը (46) հավասար է այն հաշվարկելու համար օգտագործված 6 աղբյուրների համաթվերի միջին թվաբանականին:[1] Այդ աղբյուրներն են՝ Բերթելսմանի հիմնադրամի 2026 թ. տրանսֆորմացիոն համաթիվը (51 միավոր, նույնը ինչ 2024թ.-ին), Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2024թ. զեկույցի *Կոռուպցիա* ենթահամաթիվը (44 միավոր, նույնը ինչ 2024թ.-ին), Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2024թ. վարկանիշը (46 միավոր, նույնը ինչ 2024թ.-ին), Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2025թ. ուղեցույցը (33 միավոր, նույնը ինչ 2024թ.-ին), Ժողովրդավարության բազմազանության ծրագրի 2025 թ.-ի հրապարակումը (50 միավոր, նույնը ինչ 2024թ.-ին) և Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման 2025թ. հրապարակումը (53 միավոր, 2024թ.-ին՝ 56):[2]

Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2015-2025թթ. ընկած ժամանակահատվածում:

Գծապատկեր 1



[1] Տվյալ երկրի ԿԸՀ համաթիվը հանդիսանում է այդ երկրի համաթիվը հաշվարկելու համար օգտագործված բոլոր աղբյուրների համար հաշվարկված համաթվերի միջին թվաբանականը:
[2] Հարկ է նշել, որ Հայաստանի ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվել են այն նույն աղբյուրները, ինչ նախորդ չորս տարիներին՝ 2021, 2022, 2023 և 2024 թվականներին:

2025 թ. 182 երկիր ներառող ԿՀՀ դասակարգման աղյուսակում Հայաստանը Քուվեյթի, Մոնտենեգրոյի (Չեռնոգորիա), Նամիբիայի և Սենեգալի հետ կիսում է **65-69-րդ** տեղերը (2024 թ.-ին Հայաստանը կիսում էր 63-64-րդ տեղերը 180 երկրների շարքում): **Գծապատկեր 2**-ում ներկայացված են Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների, ներառյալ Հայաստանի, 2024 ԿՀՀ արժեքները: Ինչպես երևում է Գծապատկերից, Հայաստանն իր 2025թ. ԿՀՀ համաթվի արժեքով ԵԽ այն 42 երկրների մեջ, որոնց ԿՀՀ-ն 2025 թվականին հաշվարկվել է, Մոնտենեգրոյի հետ կիսում է 30-31-րդ տեղերը, ընդ որում ԵՄ անդամ 27 երկրներից միայն երեք երկրների (Ռումինիա, Բուլղարիա և Հունգարիա) ԿՀՀ համաթվի արժեքներն են Հայաստանի ԿՀՀ համաթվի արժեքից ցածր: Սա բավականին համեստ ցուցանիշ է, որը նաև ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն բարեփոխումները դեռևս չեն տալիս գործարարների և փորձագետների ակնկալած արդյունքները, որոնց ընկալումները չափում է ԿՀՀ-ն:

Ինչպես երևում է Գծապատկերից՝ Հայաստանը ԵԽ երկրների մեջ նույնիսկ միջին հորիզոնականներում չէ: Սա նշանակում է, որ Հայաստանը դեռևս շատ անելիքներ ունի՝ գրանցելու համար իրական առաջընթաց կոռուպցիայի դեմ պայքարում:

Գծապատկեր 2



Ինչպես և նախորդ չորս տարիներին, Հայաստանի ԿՀՀ արժեքը 2025 թվականին (**46**) ավելի բարձր է ԿՀՀ համաշխարհային միջին արժեքից (այն **43**-ից նվազել է՝ դառնալով **42,** որը վերջին տասնամյակի ամենացածր ցուցանիշն է): Այն նաև գերազանցում է հարևան երկրների (բացի Վրաստանից) և ԵԱՏՄ մյուս երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան) 2025թ. ԿՀՀ արժեքները: Իր հարևաններից **Թուրքիան** (**31**) կիսում է **124-129**-րդ տեղերը, **Իրանը (23)՝ 153-156**-րդ տեղերը, իսկ **Ադրբեջանը** (**30**)՝ **130-134**-րդ տեղերը: ԵԱՏՄ երկրներից **Ղազախստանը** (**38**) զբաղեցնում է **96-98**-րդ տեղերը, **Բելառուսը** (**31**)՝ **124-129**-րդ տեղերը, **Ղրղզստանը** (**26**)՝ **142-147**-րդ տեղերը և **Ռուսաստանը** (**22**)՝ **157-160**-րդ տեղերը:

Գծապատկեր 3



Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ՝ Հայաստանը, ներառված է Արևելյան Եվրոպա - Կենտրոնական Ասիա տարածաշրջանի մեջ, որի դասակարգման աղյուսակը՝ հաշվարկված համաթվերով ներկայացված է **Գծապատկեր 3**-ում:

Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանը, 53-55-րդ տեղերում գտնվող **Վրաստանից (50)** հետո, երկրորդ տեղում է տարածաշրջանի երկրների շրջանում: